ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՆԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹՈՒՐՔԻԱՅԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Ազգային ինքնությունը բազմիմաստ հասկացությունն է, որը կարող է ունենալ տարբեր մեկնաբանություններ: Ամենաընդհանուր ձևով այդ հասկացության տակ ընդունված է համարել որևէ պետությանը կոլեկտիվ պատկանելիության զգացումը: Խոսելով ազգային ինքնության մասին՝ մենք ի նկատի ունենք, ամենից առաջ, կոնկրետ երկրի քաղաքացիների մոտ անցյալի ընդհանրության զգացումը, որի մեջ մտնում են պատմության նախորդ շրջանների, իրադարձությունների և պատմական անհատների, տվյալ ազգի ճակատագրի ընդհանրության հանդեպ կոլեկտիվ հավատի մասին հիշողությունները: Ազգային ինքնությունը պահանջում է նաև քաղաքացիների մոտ ներկայի ընդհանրության զգացման առկայություն: Տվյալ դեպքում խնդիրը կայանում է երկրի քաղաքական ու հասարակական զարգացման հիմնարար հարցերի շուրջ ազգային համաձայնության մեջ: Վերջապես, ազգային ինքնություն հասկացությունը ենթադրում է նաև ազգի մոտ ընդհանուր ապագայի զգացման առկայություն[1]:

Այսպիսով, ազգային ինքնությունը իրենից ներկայացնում է մի սոցիալ-հոգեբանական իրողություն, որն, ըստ էության, ուղղորդում է երկրի ներքին ու արտաքին քաղաքականությունը: Տվյալ ազգի հանրային մտապատճենները, նախապաշարումները և գերակայությունները այս կամ այն աստիճանով կիսվում են այն մարդկանց կողմից, որոնք վարում են երկրի քաղաքականությունը: Այդ հասկացությունը որոշում է առանձին ազգի տարբերությունը մնացած աշխարհից, որի հետ տվյալ երկրի կառավարությունը կառուցում է հարաբերությունները ամբողջ ազգի անունից:

Այս համատեքստում թուրքական ազգային ինքնության գործոնը Թուրքիայի ժամանակակից պատմության մեջ հարկ ենք համարում դիտարկել երկու կողմերով՝ նրա ներգործությունը ներքաղաքական զարգացման մեջ և նրա ազդեցությունը Թուրքիայի աշխարհաքաղաքական

դեմքի և դերակատարության վրա: Առավել ևս, որ ազգային ինքնության հիմնահարցը արդիական է համաշխարհային այնպիսի խոշոր դերակատարների՝ Ռուսաստանի, Չինաստանի, Հնդկաստանի, Իրանի, մահմեդական աշխարհի պետությունների քաղաքականության համար:

Թերևս, դեռ Առաջին աշխարհամարտի և համընդհանուր աշխարհաքաղաքական ու հասարակական փոփոխությունների հետևանքով Թուրքիայի առջև ծառացել էր սեփական ինքնության, ազգային «Եսի» փոխակերպման և հստակեցման հիմնախնդիր: Նախորդ ինքնությունը իր արմատներն ուներ Օսմանյան կայսրության աշխարհածավալ բնույթի և նրա անկման շրջանի հոգեբանության և քաղաքականության մեջ, երբ տիրում էր վախ մեծ տերությունների կողմից թուրքական պետության դեմ ուղղված դավերի և նվաճողական ծրագրերի կապակցությամբ: Դրան գումարվեց համաթրքության (պանթյուրքիզմի) տեսությունը, որն առաջ քաշվեց, երբ պարզ դարձավ, որ կայսրության բազմազգ բնակչության մոտ համընդհանուր օսմանցիական ինքնության ձևավորումը իրականանալի չէ: Ընդ որում, ազգային ինքնության նման ընկալումը իր դրսևորումը գտավ կայսրության ոչ թուրք ժողովուրդների բնաջնջման՝ ցեղասպանության հետևողական քաղաքականության մեջ: Հենց այդ գործոնները դրդեցին Օսմանյան Թուրքիային մտնել համաշխարհային պատերազմի մեջ և դրանով նպաստեցին նրա պարտությանը և փլուզմանը: Ակնհայտ է նաև, որ նման ժառանգության ընդունումը կարող էր բացասական հետևանքներ ունենալ թուրք ժողովրդի համար: Եվ 1919-1922թթ. Անատոլիայում ծավալված ազգայնական շարժման հետևանքով ստեղծված Թուրքիայի Հանրապետությունը դիտվեց որպես այդ ժառանգությունից ազատվելու լավագույն ուղի: Օսմանյան անցյալի հետ արմատական խզման էական հատկանիշ դարձավ հասարակական գիտակցության զտումը: Այդ գիտակցությունը պետք է ծառայեր որպես մաքուր թուղթ (*tabula rasa*), որի վրա կդրոշմվեր նոր թուրքական ազգային պետության հիմնարար գաղափարախոսությունը:

Հարկ է նշել նաև, որ թուրք ժողովրդի ազգային «Եսը» դարեր շարունակ որոշվում էր իսլամի գործոնով: Իսլամական ինքնությունը վեց դարվա ընթացքում որոշում էր օսմանյան-թուրքական հանրության քաղաքական ու սոցիալական էությունը: Բայց վերջիվերջո այն բախվեց XIX դարում արդիականացման շարժման հետ, երբ հետզհետե մոդեռնիզացվող ռազմա-բյուրոկրատական վերնախավը նպաստում էր կայսրության արևմտականացմանը և Արևմուտքի հետ ընդհանուր ինքնության գոյացմանը՝ դիտելով դրանք որպես կայսրության պահպանման միակ հնարավոր ուղի: Այդ էլիտան էլ իր ձեռքը վերցրեց կայսրության պարտությունից և փլուզումից հետո թուրքական պետականության փրկության և ամրապնդման գործը, ինչն իր արտահայտությունը գտավ քեմալական

շարժման և 1920-1930-ական թթ. բարեփոխումների մեջ: Հայ անվանի թուրքագետ Ռ.Սահակյանը իրավամբ նշում է, որ Հանրապետության հիմնադիր Քեմալ Աթաթյուրքը խորապես հասկացավ, որ համենայն դեպս մոտակա ժամանակաշրջանում կրոնական գործոնը չէ, որ պիտի լիներ ազգային ինքնության հիմքը և առաջ քաշեց թուրքական էթնոսի, թուրք (այլ ոչ թե թյուրք) ազգի մեծության գաղափարը՝ հաղորդելով թուրքերի ինքնությանը աշխարհիկ բնույթ: Փորձ կատարվեց անգամ հիմնավորել այդ նոր ինքնությունը համաշխարհային պատմության աղավաղմամբ: Հենց Մուստաֆա Քեմալի նախաձեռնությամբ ու անմիջական ղեկավարությամբ հիմնադրվեց Թուրքիայի Պատմական Ընկերությունը, որի հրատարակած «Պատմություն» (Tarih) չորս ընդարձակ հատորները կոչված էին ընդգծելու թուրքերի բացառիկ դերը համաշխարհային քաղաքակրթության մեջ, հաստատելու նոր Թուրքիայի աշխարհագրական տարածքի՝ Անատոլիայի թուրքական լինելը՝ խառնված խեթերի և Կենտրանական Ասիայի նախաթյուրքերի կոնցեպցիաների հետ:

Թուրքիայի բնակչության համախմբումը, նրա ընդհանրության զգացումը պետք է իրականացվեր «թուրքիզմի» հիմքի վրա, որտեղ կենտրոնական դեր էր հատկացվում թուրքական ազգին պատկանելիությանը և Թուրքիայի քաղաքացի լինելուն: Ցանկացած ոք, որ կրում էր թուրքական քաղաքացիություն և իր հայրենիքն էր անվանում Թուրքիան, համարվում էր և այսօր էլ համարվում է թուրք: Քեմալական ազգայնականությունը սահմանափակվեց ԹՀ սահմաններով՝ ընդգրկելով նրա բոլոր քաղաքացիներին: Այս արագ և գործնական լուծմամբ Աթաթյուրքը փորձեց ստեղծել նոր թուրքական ազգային ինքնություն և մշակույթ, որոնց մեջ տեսականորեն հաշվի չէր առնվում ռասայական կամ կրոնական պատկանելիությունը: Աթաթյուրքը շախադեց այդ նոր ազգային ինքնությունը «Ի՞նչ երջանիկ է նա, ով իրեն թուրք է համարում» կարգախոսով, որն այսօր փակցված է թուրքական պաշտոնական մարմինների շենքերին:

Մյուս կողմից, 1920-30-ական թվականների բարեփոխումների հետ զուգահեռ նորաստեղծ Հանրապետությունում ընթանում էր նաև որոշակի արգելքների կամ տաբուների հաստատման մի գործընթաց, որը վերաբերվում էր Հանրապետության հիմնարար սկզբունքների և պետական դոգմաների մեկնաբանմանը: Այն է՝ (1) հասարակության մեջ գոյություն չունեն որևէ դասակարգեր. «Մենք մեկ միասնական զանգված ենք»,- հռչակվում էր իշխող ՀԺԿ-ի ծրագրում, (2) գոյություն չունի ոչ մի էթնիկական-մշակութային բազմազանություն, յուրաքանչյուր քաղաքացին թուրք է, (3) Թուրքիան աշխարհիկ պետություն է, և իսլամն ու իսլամական մշակույթը դիտվում էին որպես հասարակական առաջընթացի ճանապարհի վրա արգելք, (4) Թուրքիայի տարածքում չի իրականաց-

վել որևէ ցեղասպանություն, (5) զինվորականությունը դիտվում է այսուհետ որպես Հանրապետության հիմքերի պահապանն ու երաշխավորը, և նրա դերը պետության ներսում և արտաքին քաղաքականության որոշման մեջ քննադատության ենթակա չէ[3]:

Սակայն 1960-ական թվերից ի վեր սկսվեց տվյալ արգելքների քննադատությունը, երբ ձախ գաղափարախոսությանը հարող հասարակական խմբերը բացահայտ պնդեցին, որ Թուրքիայում գոյություն ունեն դասակարգեր: Դրան հետևեցին քրդերն ու իսլամիստները, որոնք խոսեցին ազգային բազմազանության և իսլամական ինքնության գոյության մասին: Այդ քննադատությունը նպատակ չուներ կասկածի տակ դնելու Հանրապետության փաստը, այլ դիտարկում էր այն որպես վերանորոգման կարիք զգացող մեքենա: Սակայն զինվորականությունը որպես վերոնշյալ արգելքների պահապան թույլ չէր տալիս այդ խմբերին միավորել սեփական ջանքերը և հեշտությամբ ճնշում էր նրանց գործունեությունը: Ավելին, այս կամ այն ձևով այդ արգելքները ամրագրվել էին Սահմանադրության և քրեական օրենսգրքի մեջ և ցանկացած անհատ կամ խումբ, որոնք հանդես էին գալիս դրանց դեմ, հավասարվում էին պետության թշնամիներին: Այնուամենայնիվ, փոփոխություններն այնքան խորացան, որ այսօր երկրի քաղաքական էլիտան, անգամ իրենք՝ զինվորականներն ընդունում են, որ Թուրքիայում հասարակությունը միատեսակ չէ, որ իսլամը մեծամասամբ որոշում է երկրի մշակութային կյանքը և որ քրդերը գոյություն ունեն որպես ժողովուրդ և ունեն մշակութային ինքնավարության իրավունք: Դա նշանակում է, որ քեմալական պետական դոգմաները սասանված են:

Բացի դրանից, այսօր Թուրքիայում առկա են որոշ խմբեր, ինչպես, օրինակ, արմատական ազգայնականները և իսլամիստները, որոնք մերժում են Աթաթյուրքի և Իսմեթ Ինյոնյուի օրոք առաջ քաշված ազգային խնդիրների լուծումները: Նրանց համոզմամբ, աշխարհիկ ինքնությունը և արևմտյան կողմնորոշումը, որոնք կոչված էին ապահովելու թուրք ժողովրդի հուսալի և ապահով գոյությունը, բերեցին ֆրուստրացիայի՝ պետության քաղաքական ու տնտեսական ձախողումների: Վերջին զարգացումները ցույց են տալիս, որ, օրինակ, իսլամական ինքնությունը զարթոնք է ապրում՝ լինելով հիմնականում աշխարհիկ արևմտյան քաղաքականության հետ շաղկապված սոցիալական ու տնտեսական զարգացման հանդեպ բնակչության հուսախաբության հետևանք: Նույնը նաև վերաբերվում է երկրում քրդական խնդրի արծարծմանը, որը ևս առաջ է բերում ազգայնականության հերթական ալիք:

Այս առումով Թուրքիայի առջև ծառացած գլխավոր ներքին հիմնահարցը հետևյալն է. ինչպիսի նախադրյալների վրա է հիմնված նրա՝ որպես ընդհանրության (պետության) գոյությունը: Մեծամասամբ կոլեկ-

տիվ խմբերը, ինչպես նաև առանձին քաղաքացիները, որոնք ապրում են երկրում, դեռևս չեն հասել այն պայմանների և համաձայնության շրջանակների որոշմանը, որոնց հիմքերի վրա նրանք պետք է գիտակցեն իրենց ընդհանուր պատկանելիությունը միևնույն հանրույթին: Թուրքական քաղաքական ու մտավորական շրջանակներում տեսակետներ կան, որ Հանրապետությունը դեռևս գտնվում է ժողովրդավարության ուղու սկզբնամասում և այսօրվա տեսքով Հանրապետության հաստատման մեջ շահագրգռված է, ըստ էության, միայն զինվորականությունը[4]:

Անդրադառնալով Թուրքիայի ազգային ինքնության գործոնի դերին աշխարհաքաղաքական առումով, հարկ ենք համարում նշել, որ Առաջին աշխարհամարտից և ԹՀ ստեղծումից հետո թուրք ժողովուրդը պետք է հարմարվեր այն իրողության հետ, որ Թուրքիան այլևս մեծ տերություն չէ և դարձել է երկրորդական նշնակություն ունեցող մի պետություն: Այստեղ հետաքրքրական է այն հանգամանքը, որ ժամանակաշրջանը, երբ այս կամ այն կայսրությունն ապրում է քայքայման պրոցես, դառնում է իսկական ցնցում այն ժողովրդի համար, որը հանդիսանում է կայսրության գաղափարի կրողը: Հարյուրամյակներով ձևավորված հոգեբանությունը, մտածելակերպը, աշխարհընկալումը և սեփական ինքնության գնահատականը, այս ամենը փլուզվում են, երբ տվյալ ժողովուրդը դադարում է լինել այն մինի-աշխարհի կենտրոնը, ինչպիսին յուրաքանչյուր կայսրությունն է: Կայսրության փլուզումը ուղեկցվում է կորստի դառը զգացմամբ, սովորական դարձած ընկալումներից և պատկերացումներից հրաժարմամբ, դեռ երեկ քեզ ենթակա ժողովուրդների հետ հավասար հարաբերությունների կառուցման անհրաժեշտությամբ: Տարբեր ժամանակներում ամեն «կայսրական» ժողովուրդ յուրովի էր վերաբերվում այդ գործընթացին: Այսպես, Հռոմը և Բյուզանդիան մինչև վերջ պայքարում էին կայսրության պահպանման համար, ինչով իրենց մտանեցին վերջնական կործանման: Արաբներն ավելի իներտ կերպով էին դիմադրում քայքայման պրոցեսին և դրանով պահպանեցին անհրաժեշտ ուժերը արաբական աշխարհի գոյատևման համար: Իրադարձությունների այս տրամաբանությունը լավ էր հասկացել Քեմալ Աթաթյուրքը, որն ամեն ինչ արեց թուրքական էթնոսի միասնական գոյության պահպանման համար և ձեռք բերեց այն տարածքը, որը կարող էր դառնալ հայրենիք այդ էթնոսի համար, որին առաջ պատկանում էր ամբողջ կայսրությունը, բայց որը չուներ հայրենիք: Դասեր քաղելով իր նախորդների քաղաքականությունից՝ Աթաթյուրքը առաջ քաշեց «աշխարհում խաղաղություն, երկրում խաղաղություն» հայտնի հիմնադրույթը: Քեմալական արտաքին քաղաքական դոկտրինի համաձայն Թուրքիան պետք է խուսափեր ռազմաքաղաքական դաշինքների ու կազմակերպությունների մեջ մտնե-

լուց և հրաժարվեր պանթյուրքիզմից ու պանիսլամիզմից՝ որպես պետական գաղափարախոսությունից, ու չպետք է վարեր ծավալապաշտական քաղաքականություն՝ գոյություն ունենալով 1920թ. «Ազգային ուխտի» նախանշած սահմաններում և ձգտելով հաստատել իր շուրջ կայունության գոտի, ինչը հնարավորություն կտար իրեն կենտրոնանալու երկրի մոդեռնիզացման հարցերի վրա[5]: Ըստ էության, քեմալական շրջանում լուծվեց այն խնդիրը, որ կայսրության գաղափարակիր ժողովուրդը կա՛մ իր մեջ ուժ գտներ հրաժարվել կայսրական գաղափարից, վերջնականապես ճշտելով իր տարածքը, որի պահպանմանն ու զարգացմանը հարկավոր էր ուղղել սեփական եռանդն ու ներուժը և տեսանելի ապագայում վերականգնվել որպես ուժեղ պետություն, կա՛մ էլ անընդհատ փորձեր կատարել կայսրությունը վերականգնելու համար, վատնել սեփական ուժերը և ռեսուրսները հարևանների հետ հյուծիչ քաղաքական, տնտեսական ու ուժային պայքարում՝ դրանով լուրջ վտանգ ստեղծելով սեփական պետականության գոյության համար: Որդեգրելով առաջին այլընտրանքը՝ Թուրքիան մոտ 35-40 տարվա ժամանակահատվածով ապահովեց իրեն կայուն, թեև ոչ դինամիկ զարգացման ուղի:

Աթաթյուրքի օրոք կարևորվեց նաև Արևելքի և Արևմուտքի միջև Թուրքիայի միջանկյալ դիրքը: Եթե Օսմանյան կայսրությունը որդեգրել էր Արևմուտքին հակադրվելու և Արևելքը նվաճելու մոտեցումը, փորձելով ներքին խնդիրները ենթարկեցնել արտաքին հարցերի լուծմանը, ինչի հետևանքով այդ կայսրությունը ի վերջո դարձավ Արևմուտքի աշխարհաքաղաքական պլանների թիրախ և փլուզվեց, ապա ժամանակակից Թուրքիայի Հանրապետությունը նախընտրեց կենտրոնանալ ներքին խնդիրների լուծման վրա և միաժամանակ ներգրավվել եվրատլանտյան աշխարհաքաղաքական ու աշխարհատնտեսական ընդհանրության մեջ:

Սակայն Եվրոպան, դեպի որն այդքան ձգտում է Թուրքիան, երկար ժամանակ նույնացնում էր և շարունակում է նույնացնել նրան հետամնաց, մահմեդական երկրի հետ, չընկալելով այն որպես իր քաղաքակրթության մի մաս՝ չնայած Աթաթյուրքի և նրա հետնորդների ջանքերին ապացուցելու, որ Թուրքիան այն արդիական պետությունն է, որը առաջացել է միջնադարյան կայսրություններից մեկի փլուզման հետևանքով և որը ձգտում է սերտաճել եվրոպական քաղաքակրթության հետ: Այսօր բազմաթիվ թուրք մտավորականներ նշում են, որ Թուրքիան գնաց զուտ արևմտյան նմուշների փոխառման, պատճենահանման ուղիով և չհաղորդեց իր արևմտյան ինքնությանը լուրջ բովանդակություն: Բայց ինչպես այդ, այնպես էլ Արևմուտքից հնչող քննադատությունը թուրք քաղաքական առաջնորդները միշտ բացասաբար են ընդունել: Այսպես, Թուրքիայի 8-րդ նախագահ Օզալը անգամ հայտարարում էր, որ «Եվրոպա-

կան Միությունը փակ քրիստոնեական ակումբ է, որտեղ մահմեդական երկրների մուտքը չի թույլատրվում»[5]:

Ինչպես նշում է հայտնի ամերիկյան քաղաքականագետ Ս.Հանթինգտոնը իր հայտնի «Քաղաքակրթությունների բախում» աշխատությունում, Թուրքիայում ազգային ինքնության խնդրում չկա համաձայնություն (consensus), թե որ քաղաքակրթությանն է պատկանում Թուրքիան: Էլիտան արտաքնապես ձգտում է միանալ Արևմուտքի աշխարհաքաղաքական ու քաղաքակրթական ընդհանրությանը, պահպանում է իր հավատարմությունը արևմտյան տիպի արդի աշխարհիկ պետությանը, որը հանդիսանում է ՆԱՏՕ-ի լիարժեք անդամ, Մերձավոր ու Միջին Արևելքու, խոշոր ճգնաժամերի պահերին Արևմուտքի վստահելի դաշնակիցը տարածաշրջանում: Մակայն երկրի պատմությունը, մշակույթը և ավանդույթները քիչ ընդհանուր բան ունեն Արևմուտքի հետ: Թուրքական հասարակության որոշակի տարրեր աջակցում են իսլամական ավանդույթների վերականգնմանը և պնդում, որ Թուրքիան արևելյան մահմեդական երկիր է[6]:

Բացի այդ, վերջին տասնամյակում միջազգային հարաբերությունների համակարգում և աշխարհաքաղաքական պատկերում ընթացող զարգացումները իրենց դրոշմն են թողել Թուրքիայի ազգային դեմքի վրա: Սկզբից Խորհրդային Միության փլուզումը իրենից բխող հետևանքներով նոր հեռանկարներ բացեց Թուրքիայի համար, ինչն ուղեկցվում էր երկրի ներսում պանիսլամիստական և պանթյուրքիստական ծավալապաշտության որոշակի վերակենդանացմամբ: Այս իմաստով թուրքական իշխող էլիտան բաժանվեց ապագայի նկատմամբ ունեցած երկու ուղղություների՝ կա՛մ Հանրապետության այսօրվա սահմաններում առաջ գնալ ժողովրդավարացման ուղիով և շարունակել Արևմուտքի հետ ինտեգրումը, կա՛մ էլ փորձել իրականացնել նորից մեծ տերություն դառնալու երազանքը՝ վերակենդանացնելով կապերը Կենտրոնական Ասիայի և Կովկասի թյուրքալեզու ժողովուրդների հետ:

Եվրոմիության մեջ անդամագրման դիմումների մերժման հետևանքով Թուրքիան բնական է, որ պետք է սկսեր ձգտել դեպի հակառակ կողմ՝ Եվրասիա (այդպես անվանում արդի ախարհաքաղաքագիտության մեջ Կովկասն ու Կենտրոնական Ասիան), փորձելով գլխավորել նոր՝ թյուրքական քաղաքակարթական ընդհանրությունը՝ Ադրիատիկից մինչև Չինական պարիսպ: Ելնելով ազգային ինքնության հենց նման ընկալումից՝ 1990-ական թթ. Թուրքիան վարձեց իրականացնել Եվրասիայում իր գերիշխանության հաստատման երազանքը: Պանթյուրքիստական ուղղվածություն ունեցող քաղաքական ուժերը կառավարությունից պահանջում էին ավելի սերտացնել հարաբերությունները նորանկախ թյուրքալեզու պետությունների հետ՝ գտնելով, որ Թուրքիան պետք է այդ

երկրների հետ հարաբերություններում հեգեմոնի կամ հովանավորի դեր ստանձնի: Որոշ շրջանակներում արծարծվում է նաև «Թուրանի» գաղափարի արդիականացման միտքը: Նման գաղափարներ հիմնականում արտահայտում է Ազգայնական Գործողության կուսակցությունը: Իսլամիստական քաղաքական ուժերը, պահանջելով կառավարությունից արագորեն ստանձնելու թյուրքալեզու աշխարհում հեգեմոնի դերը, դիտում էին դա որպես ամբողջ մահմեդական աշխարհում Թուրքիայի գերիշխող դերի հաստատմանն ուղղված առաջին քայլ: Սակայն գործադրած մեծագույն ջանքերը հիմնականում ապարդյուն անցան, թուրքական դիվանագիտությանը չհաջողվեց հասնել ցանկալի արդյունքների: Դա տեղի ունեցավ ինչպես Թուրքիայի քաղաքական, տնտեսական ու ռազմական առկա հնարավորությունների և ներուժի ոչ բավարար աստիճանի, այնպես արտաքին դիմադրության պատճառով: Անկարան փաստորեն արձանագրեց Եվրասիայում միայն սահմանափակ ձեռքբերումներ սեփական աշխարհաքաղաքական, ռազմա-քաղաքական ու տնտեսական ազդեցության տարածման գործում:

Պատահական չէ, որ վերջին ժամանակաշրջանում երկրի զինվորական, քաղաքական, մտավորական ու գործարար էլիտան գերադասում է ավելի զուսպ դիրքորոշումներ հանդես բերել: Այդ էլիտան այնուամենայնիվ մնում է հիմնականում արևմտամետ և հավատարիմ Աթաթյուրքի ժառանգությանը: Լինելով պրագմատիկ, նրա ներկայացուցիչները պետք է հասկանան, որ Թուրքիան տնտեսապես և քաղաքականապես դեռևս պատրաստ չէ տարածաշրջանում քաղաքական գերիշխող ուժի վերածվել:

Այսպիսով, վերոնշվածը թույլ է տալիս մեզ անել հետևյալ եզրահանգումները՝

1) Թուրքիայի ազգային ինքնությունը մինչև XX դար հիմնվում էր «մեծ տերության», կայսրության ընկալման վրա, իսկ Առաջին աշխարհամարտից հետո այն վերածվեց երկրորդական նշանակություն ունեցող, սակայն տարածաշրջանային առաջնորդության հավակնող պետության ընկալմանը: Միաժամանակ այդ պետությունը ստեղծվեց և գոյտևեց պաշտոնական գաղափարախոսության մակարդակին հասցված ազգայնականության հենքի վրա:

2) Թուրքիայի ինչպես իշխող, այնպես հասարակական շրջանակներում ազգային ինքնության խնդրում մինչ օրս գոյություն չունի համաձայնություն և որպիսի այն կարողանա ձեռք բերի հաստատուն տեսք, երկրի քաղաքական, մտավորական ու տնտեսական էլիտան պետք է աջակցի նման քայլին և ակտիվորեն մասնակցի դրա իրականացմանը: Ըստ էության, Թուրքիան կանգնած է նոր ուժերի և առաջնորդների ի

հայտ գալու անհրաժեշտության առաջ, որոնք ունակ կլինեն մարտահրավեր նետել նրա ավանդական կերպարին ու ինքնությանը:

3) Թուրքիայում գոյություն ունի մի վերնախավ, որը կողմնորոշված էր դեպի ազգային ինքնության արևմտյան «մեկնաբանում» և ջանք էր է թափում երկիրն ամեն գնով ինտեգրել այսօր համաշխարհային առավել ազդեցիկ ուժի կենտրոն հանդիսացող եվրոատլանտյան աշխարհաքաղաքական համակարգին: Սակայն այդ վերնախավը գիտակցում է նաև, որ Թուրքիայի դերը այս համակարգում մնալու է երկրորդական: Այդ պատճառով որոշակի միջոցներ առնվեցին Անդրկովկասում ու Կենտրոնական Ասիայում աշխարհաքաղաքական ու աշխարհատնտեսական ազդեցության տարածման ուղղությամբ: Մոտակա ապագայում, ելնելով հենց սեփական աշխարհաքաղաքական ինքնության առանձնահատկություններից, Թուրքիան փորձելու է ստանձնել ինչպես եվրոատլանտյան, այնպես էլ եվրասիական համակարգերում հատուկ գերակատարություն և միաժամանակ ամրապնդել իր տեղը զարգացող, գլոբալացվող և արդիականացվող աշխարհի ուղեծրում:

BAGHDASARYAN SUREN

FACTOR OF NATIONAL IDENTITY IN MODERN TURKISH POLITICS

(Summary)

In dealt paper a factor of the Turkish national identity in the modern history of Turkey is considered by two sides – its effect on the inner policy developments and its influence on Turkey's geopolitical image and performance.

After the World War I and worldwide geopolitical and social changes Turkey was in front of issue of own identity transformation and clarification. The previous identity has been rejected as a traumatic legacy, and the social consciousness has to serve as *tabula rasa*, where it would imprint fundamental ideology of the new Turkish nation-state, expressing an idea of pure nationalism by a device "How is happy to be Turk!".

By another side, in parallel with reforms of 1920-1930s in the new-established Republic there took place a process of establishment of certain prohibitions or taboos relating to basic principles and state tenets of the Republic, as (1) the rejection of existence in the Turkish society of classes, (2) the rejection of existence in the country of ethnic and cultural diversity, (3) Turkey is a secular state, and Islam and Islamic culture must be considered a hinder on the way of social progress, (4) on Turkey's territory there were no ethnic cleansing, (5) the military must be considered as a guardian and guarantor of the foundations of the Republic, and its role in the country's inner and foreign policy decision-making is not subjected to any discussion.

But since 1960s it begun a wave of criticism against these taboos. Firstly, the left political forces pointed an existence of classes in Turkey. After the Kurds and the Islamists spoke about the national diversity and Islamic identity. The military, however, suppressed these activities, considering any word against above-mentioned

taboos as a state crime. However, the changes so deepened that today the political elite of Turkey and even the military accepted an idea of Turkey's society life and culture transformation, which meant that Kemalist state tenets are shattered.

After the World War I and the creation of the Turkish Republic the Turkish people had to accommodate to a reality that Turkey is not any longer great power and has become a second-degree state. Having learn a lesson from his predecessors policy Atatürk advanced a teaching, according ti it Turkey must avoid to come in any military-political alliances and organizations and reject from expansionist policy, aspiring to form around itself a zone of stability, which gives it an opportunity to concentrate on the country's modernization issues. Turkey preferred also to involve in Euro-Atlantic geopolitical and gco-economic community, but Europe identified it long time with backward, Muslim country, not perceiving Turkey as a part of its own civilization.

At present time in Turkey there is no consensus about the national identity issue. The elite, it seems, aspires to join to the Western geopolitical and civilization community and keeps its adherence to the Western secular type state. But the history, culture, and traditions of the country have little similarities with the West. Certain elements of the Turkish society maintain to rebirth of the Islamic traditions. Besides, at last decade the proceeding developments of the international relations system and geopolitical image imprinted Turkey's national identity. They divided the ruling elite by two alternatives: either to go forward on the way of democratization and integration with the West, or to try fulfill again a dream of great power, establishing relations with the Turkic peoples of the Central Asia and Caucasus and to be at the head of new Turkic community from Adriatic Sea to the Chinese Wall. But all efforts were in this direction practically ineffective because of insufficient degree of Turkey's political, economic and military potential and opportunities, as well as the resistance of the foreign forces.

Thus, the above-mentioned allows to make the following conclusions: (1) national identity of Turkey untill XX century was based on the perception of great empire, but after World War I it transformed into relatively small, but having nationalist and regional ambitions state; (2) till present time in the ruling and societal circles of Turkey there is no consensus about the national identity. Moreover, there is a deep gap between the reality and officially proclaimed values; (3) in Turkey there is an elite which orients on the Western "comment" of the national identity and makes efforts to integrate the country in today's most influential center of force – the Euro-Atlantic geopolitical system. But this elite is also aware that the role of Turkey in that system will remain minor, and on this reason Turkey tried and continue to try expand its geopolitical and geo-economic influence in direction of Transcaucasus and the Central Asia. In the foreseeable future, proceeding from own geopolitical identity's peculiarities Turkey wil try to assume a special performance between the Euro-Atlantic and Euro-Asian systems and simultaneously to firm its place on the orbit of developing, globalizing and modernizing world.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Smith A. National Identity and the Idea of European Unity – "International Affairs", 1992, vol. 68, N 1, p.58.
2. Սահակյան Ռ. Կայարությունից դեպի ազգային պետություն - «Ինքնություն», Երևան, 1995, էջ 137.
3. Akçam T., Türk Ulusal Kimliği ve Ermeni Sorunu, Istanbul, 1995, s. 9-75.
4. «Ազգ», 12.09.1997.
5. Huntington S., Clash of Civilizations – "Foreign Affairs", Fall 1993, N 3, p. 14.
6. Ibidem, p. 15.